Grant Thornton Amyot

Որակավորված աուդիտորներ և հաշվապահներ
Կառավարման և հարկային խորհրդատուներ
Իրավախորհրդատուներ

Անկախ աուդիտորի եզրակացություն

«ՊՐՈՄԵԹԵՅ ԲԱՆԿ» ՍՊԸ-ի 2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

«ՊՐՈՄԵԹԵՅ ԲԱՆԿ » ՍՊԸ -ի բաժնետերերին,

Մեր կողմից իրականացվել է «ՊՐՈՄԵԹԵՅ ԲԱՆԿ » ՍՊԸ -ի (այսուհետ՝ Բանկ) 2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշռի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների, դրամական միջոցների հոսքերի և սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունների աուդիտը: Նշված ֆինանսական հաշվետվությունների համար պատասխանատվությունը կրում է Բանկի ղեկավարությունը: Մեր պատասխանատվությունն է իրականացված աուդիտի հիման վրա արտահայտել կարծիք Բանկի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի Հայաստանի Հանրապետության ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտները պահանջում են այնպես պլանավորել և իրականացնել աուդիտը, որպեսզի ձեռք բերվի բավարար երաշխիքներ, որ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում էական թերություններ: Աուդիտն ընդգրկում է ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տվյալներն ու համապատասխան ծանոթագրությունները հիմնավորող փաստերի ընտրանքային կարգով ստուգում: Աուդիտն ընդգրկում է նաև Բանկի ղեկավարության կողմից կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատականը: Մենք համոզված ենք, որ մեր կողմից անցկացված աուդիտը բավարար հիմք է հանդիսանում մեր եզրահանգման համար:

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները տալիս են Բանկի 2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ Հայաստանի Հանրապետությունում բանկային գործունեությունը կանոնակարգող օրենսդրության համաձայն:

Հ. Բակլաչյան
ԱՈՒԴԻՏԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. Փիլիպոսյան
ՏՆՕՐԵՆ-ԲԱԺՆԵՏԵՐ

Երևան, 23 ապրիլի, 2007թ.

ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ ԱՄԻՕ ՍՊԸ

ՀՀ, Երևան 0012
Վաղարշյան 8/1
Հ +374 (0)10 260 964 / 260 976 / 276 544
Ֆ +374 (0)10 260 961
էլ gta@gta.am
Կ www.gta.am

Գրանթ Թորնթոն Ինթերնեշնլի անդամ

Պետական գրանցման վկայական թիվ 01 Ա 035877, Աուդիտորական գործունեության լիցենզիա ԱԾ # 011
տրված ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից